



Carnet de route citoyen

Atelier d'orientation citoyenne

Version : arménien—2021




AUX CENTRES RÉGIONAUX D'INTÉGRATION

DISPOSITIF DE CONCERTATION ET D'APPUI

www.discr.be

Table des matières

Remerciements	3
Logement	4
Soins de santé	18
Travail	31
Commune et CPAS	45
Taxe et tri des déchets	53
Procédures	57
Banque	75



Remerciements

Ont contribué à l'élaboration du Carnet de route citoyen :

Les Centres Régionaux pour l'intégration

Le Sétis wallon pour les traductions

L'asbl Cap Migrants de Liège

L'asbl Harmonie de Mons

Nos remerciements s'adressent spécialement à :

Florin Mircea Patru, stagiaire au Ce·R·A·I·C·, pour sa gracieuse traduction en roumain et Steluta POPA pour la mise à jour en 2021

Aurica USCOV et Inga GELIASHVILI de l'asbl Harmonie, pour leur relecture en russe

Catherine HENROTTE de l'asbl Cap Migrants pour sa contribution à la fiche contrat de travail

Les équipes des CRI et, en particulier Valérie MAUGUIT et Sophie GRAICOCHA du CRIPEL, Angelica FERULLO du CRIC, Pina LATTUCA, Anne De Vleeschouwer et Claude GIOVANARDI du Ce·R·A·I·C·, Daniel MARTIN, François MAWET, Khalissa EL ABBADI et Inès TAMAZARTI du CRVI

Conception et relecture





Փնտրել մասնավոր կացարան հեշտ չէ, հատկապես որոշ քաղաքային շրջաններում, որտեղ բնակարանները սակավ են կամ թանկ: Սոցիալական կացարան ձեռք բերելու համար պայմանները խիստ են և սպասման ցուցակները հաճախ երկար... Կացարան գտնելը հեշտ գործ չէ:



Կացարան գտնելու համար,

- զբոսնում եմ թաղամասի փողոցներով՝ ցուցանակներ գտնելու համար, խոսում եմ թաղամասի բնակիչների հետ,
- նայում եմ թերթերում և ինտերնետում տպագրված հայտարարությունները,
- ես գրանցվում եմ Սոցիալական Անշարժ գույքի ընկերությունում (ենթակա որոշակի պայմանների):



Տունը, դա մի ամբողջական շինություն է նախատեսված ընտանիքի համար:



Բնակարանը, դա մի ընդհանրություն է՝ բաղկացած բաժնեմասերից, որը գտնվում է շենքում կամ տանը: Միջինով, բնակելի մակերեսը տատանվում է 40մ²-100մ²:

Դուպլեքսը, դա երկհարկանի բնակարանն է, որի երկու հարկերը միացված են ներքին աստիճանով:



Ստուդիոն, դա փոքրիկ բնակարանն է: Այն ունի մի հիմնական սենյակ, հիմնականում՝ խոհանոցը և լողասենյակը առանձին:

Կոտը, դա ուսանողի համար նախատեսված սենյակ է: Որոշ կոտեր նախատեսված չեն հիմնական բնակեցման համար. նշանակում է մշտական բնակեցում չի կարող լինել: Դա կարևոր հարց է, որը պետք է տալ:

Հայտարարությունները հաճախ թերի են և անընթեռնելի՝ հապավումների պատճառով: Ես դրանք կարող եմ գտնել "Վարձով է տրվում բնակարան" (Appartement à louer) կամ "Կոտերի և Ստուդիոների վարձակալություն» (Kots et studios à louer) խորագրերում: Ահա մի քանի սահմանումներ գործառության համար:



App. = appartement

C.C. = chambre à coucher

Ch. = chambre

Chauff./ Chf. = chauffage

Chauff.C. = chauffage central

Chde = chaude

Chg.Compr. = charges comprises

Cuis. = cuisine

Cuis.Eq. : cuisine équipée

Dch. = douche

Ds = dans

El. = électricité

Eq. = équipé

Et. = étage

F.O. = feu ouvert

Gar. = garage

Gd/Gde = grand/grande

Hres de vis. = heure de visite

Imméd. = immédiatement

Indiv. = individuel

Jar. = jardin

Lib. = libre

Liv. = living

Mais. = maison

Maz. = mazout

Mblé ent = meublé entièrement

Mens. = mensuel

Mod. = moderne

Parlph = parlophone

Pces = pièces

Pers. : personne

Plac. = placard

Prox.ctr. = à proximité du centre

Poss. = possibilité

Pt. = petit

Px, Prx = prix

Rem. A nf = remis à neuf

Rez/Rdch = rez-de-chaussée

Sàm = salle à manger

Sdb = salle de bain

Stud. = studio

Tél. = téléphone

Terr. = terrasse

Tp. Pl = tapis plain

Tt Cft = tout confort

Wc = toilettes



Exemples :

Appartements Locations

Namur appt 2 ch
cuis.éq.garage terrasse
pour couple pas d'animaux
445€ + 65€ prov.chauff.
0496/416.787

Kots/studio à louer

Liège à louer spacieux
studio appart meublé tt
confort calme, état neuf,
Prox.ctr 550 € + Chg
04/375.32.16

Quelques sites utiles :



www.immoweb.be



www.vlan.be



www.jannonce.be



www.pap.be



www.immozoom.be




Վարձակալության պայմանագիրը հույժ կարևոր է. այն պարտադիր պետք է պարունակի սեփականատիրոջ (վարձատու) և վարձակալի ինքնությունը, պայմանագրի մեկնարկային ամսաթիվը, վարձակալած գույքը և վարձավճարը: Այն պետք է հաշվառվի սեփականատիրոջ կողմից գրանցման վարչությունում: Այն պետք է կարդալ ուշադիր մինչև ստորագրումը, քանի որ երբ ստորագրված՝ դառնում է **իրավաբանորեն պարտավորեցնող**:

Վարձակալության պայմանագիրը կարող է լինել **որոշակի կամ անսահմանափակ ժամկետով**: Պայմանագիրը խախտելու դեպքում, վարձատուն և վարձակալը պետք է հարգեն պայմանագրով սահմանված պայմանները (նախնական ծանուցագրի ժամկետը, չառարկվող համաձայնությունը...):



Այնպես որ, ես ժամանակին զգուշացնում եմ սեփականատիրոջը իմ տեղափոխվելու մտադրությունը (հաճախ երեք ամիս առաջ կամ ըստ որոշակի պայմանների), փոստում՝ պատվիրված նամակով (ստանում եմ փաստաթուղթ, որը ապացուցում է, որ իմ նամակը ուղարկվել է այդ ամսաթվին):

Սեփականատերը պետք է նշի **վարձավճարի չափը և ընդհանուր ծախսերի գումարը** (օրինակ, , սանդուղքի լուսավորման, վերելակի, սանդուղքի մաքրման ...): Այս վարձին, պետք է ավելացնել կոմունալ ծախսերը. ջեռուցման ծախսը, էլեկտրականության, ջրի ... Որոշ վարձավճարներ





ներառում միագումար ծախսեր (ծախսերը ներառված են վարձավճարի մեջ, անկախ փաստացի ծախսերից) կամ ծախսերի կանխավճար (դա ավանդն է, որը սեփականատերը կուղղի եռամսյակային կամ տարեկան փաստացի ծախսերի հիման վրա):

Վարձավճարը, հիմնականում, փոխանցվում է ամեն ամիս: Այն, սկզբունքորեն, փոփոխման ենթակա չէ վարձակալության ընթացքում, բացառապես, եթե այդպես է նախատեսված պայմանագրով:

Գույքագրում

Մուտքի անշարժ գույքի վերգրումը փաստաթուղթ է, որը նկարագրում է ճշգրտորեն թե ինչ վիճակում է գտնվում կացարանը մինչև իմ մտնելը. հարկավոր է նշել բոլոր արձանգրված խնդիրներն ու անկանոնությունները:

Սեփականատերը պետք է ցույց տա, որ կացարանը համապատասխանում է անվտանգության և առողջության պարտադիր պայմաններին: Վարձակալը, իր հերթին, պատասխանատու է իր վարձակալության ընթացքում հասցված վնասի համար, սակայն գույքագրումը երաշխիք է, որը թույլ չի տա նախկինում հաստատված որևէ վնասում իրեն մեղադրել:



Գույքագրումը պետք է կցված լինի պայմանագրին: Վավեր ճանաչվելու համար այն պետք է կատարվի երկու կողմերի ներկայությամբ, ցանկության դեպքում մասնագետի ներկայությամբ: Տվյալ դեպքում մասնագետի ծախսերը կիսվում են սեփականատիրոջ և վարձակալի միջև. ուշադրություն, մասնագետի արժեքը կարող է հասնել մինչև վարձավճարի 15 %-ին:



Պայմանագրի վերջում, եթե ես վնասներ եմ պատճառել, պետք է նրանք նորոգել, բացառապես եթե դա նորմալ մաշվածություն է: Եթե ես դա չանեմ, ապա սեփականատերը կարող է օգտագործել վարձակալման երաշխիքը, ամբողջությամբ կամ մասամբ, նորոգման համար:



Վարձակալման երաշխիք (կանխավճար, գարանտ)

Վարձակալը համարյա միշտ մղված է վճարելու մեկ, երկու կամ երեք ամսվա վարձավճարին համարժեք վարձակալման երաշխիք: Այն հնարավոր է փոխանցել սեփականատիրոջը կամ բանկում վարձակալի անունով բացված սառեցված հաշվեհամարին (խորհուրդ է տրվում թյուրիմածություններից և խաբեություններից խուսափելու համար):



Ինչպես որ անունը ցույց է տալիս, այդ գումարը ծառայում է որպես երաշխիք սեփականատիրոջ համար վարձակալի կողմից պատճառված վնասի դեպքում: Ես այն ետ եմ ստանում վարձակալության վերջում, երբ ելքի գույքագրումը հաստատում է, որ բնակարանը վերադարձվում է այն վիճակով, որ ստացել եմ: Մինչդեռ, վարձակալման երաշխիքը ոչ մի դեպքում չի կարող օգտագործվել չվճարված վարձավճարը վճարելու:

Առաջին տանվարձը և երաշխիքը վճարելու համար կանխավճար հատկացնելու համար կարող եմ դիմել իմ բնակության վայրի CPAS-ին. եթե խնդրանքս ընդունվի, ես այն կփոխհատուցեմ ըստ առաջարկված պլանի: Գոյություն ունեն նաև վարձակալման երաշխիքի ֆոնդեր և սոցիալական վարկեր հատկացնող մարմիններ, որոնք կարող են միջամտել: Կարիքի դեպքում տեղեկանում եմ:

Կարող եմ դիմել վարձակալման երաշխիքը, սառեցված հաշվեհամարին, բազմաթիվ ամիսներ վճարելու խնդրանքով:



Տեղափոխվելու և վարձավճարի նպաստ (ADEL)

Դա ֆինանսական օգնություն է՝ հատկացված վալոնյան շրջանի (Région wallonne) կողմից, վարձակալին, որը ստիպված է լքելու առողջության պարտադիր պայմաններին չհամապատասխանող կացարանը մեկ ուրիշը տեղափոխվելու համար, որը համապատասխանում է առողջության պարտադիր պայմաններին: Այդ օգնությունը կարող է հատկացվել նաև անօթևան մարդուն՝ կացարան գտնելու ժամանակ: Այն բաղկացած է միանվագ նպաստից տեղափոխման համար, որը լրացվում է լրացուցիչ նպաստով վարձավճարի հավելյալ արժեքը հաշվեկշիռ դարձնելու համար (առավելագույնը 100 եվրո / ամիսը, հավելյալ 20%՝ յուրաքանչյուր երեխայի համար):

Modèle de lettre de résiliation de bail



La Louvière, le **25 août 20..**

Monsieur (Madame) X (le nom du propriétaire),

Par la présente, je désire résilier le bail que j'ai signé le 1er janvier 20.. pour la location du studio situé :

Rue St Joseph, 21

7100 Trivières

Studio du 2ème étage

Je m'engage à quitter les lieux pour le **31 décembre 20..**

Merci de me contacter rapidement pour fixer un rendez-vous sur place, à votre meilleure convenance. Nous pourrions établir ensemble l'état des lieux et envisager les modalités de remboursement de la caution versée lors de mon entrée dans le logement.

Je vous prie de bien vouloir me signifier votre accord par retour de courrier.

En vous remerciant pour votre aimable collaboration pendant ces années, je vous prie de recevoir, Monsieur (Madame), l'expression de mes salutations distinguées.

M. Dupont

(signature)



Խնդրի առկայության դեպքում

Եթե վարձակալը չի վճարում իր վարձավճարը, սեփականատերը կարող է դիմել հաշտարար դատավորին պայմանագրի լուծարման խնդրանքով: Որոշ դեպքերում վարձակալը կարող է վտարվել իր կացարանից:

Քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է, որ սեփականատերը ապահովի կառուցվածքային վերանորոգումը, որը բարվոք վիճակում կպահի կացարանը վարձակալելու համար. ընդհանուր առմամբ, նա զբաղվում է «մեծ» վերանորոգման աշխատանքներով: Վարձակալը ապահովում է փոքր վերանորոգումները և տեխնիկական սպասարկումը՝ վարձակալության ողջ ընթացքում (օրինակ, ծխնելույզի, ջրատաքացուցչի մեջ կուտակված նստվածքի մաքրումը...):

Սեփականատերը չի կարող ներս մտնել կացարան առանց վարձակալի թույլատրության, բացառությամբ անհապաղ վերանորոգումների համար:

Մեծամասամբ, վարձակալության պայմանագրերը պարտադրում են վարձակալին բաժանորդագրվել հրդեհի ապահովագրությանը: Ցանկացած դեպքում, խորհուրդ է տրվում զգուշավորություն:

Առողջության պարտադիր պայմաններին չհամապատասխանող առկա մեծ խնդրի դեպքում, վարձակալը կարող է դիմել իր համատիրության կամ վալոնյան շրջանի անվտանգության և պարտադիր պայմաններին համապատասխանող զբաղվող ծառայությանը:

Վարձակալության պայմանագիր



Բնակարանային խտրականությունը արգելվում և պատժվում է օրենքով: Դա բավական չէ արմատախիլ անելու ստերեոտիպերն ու նախապաշարումները, որոնք բնորոշ են որոշակի դիրքորոշումներ ունեցողներին: Ուստի խելամիտ է պատրաստ լինել դիմակայելու նման իրավիճակներին:

Խտրականության դեպքում հարկավոր է ամբաստանել: UNIA (Հավասար հնարավորությունների միջդաշնային կենտրոն) անկախ հանրային ծառայություն է, որի իրավական առաքելությունն է հավասարության խթանումը և խտրականության դեմ պայքարը: Նա կարող է գործել զատորոշված անձի անունից: Խնդիր առաջանալու դեպքում հնարավոր է խորհրդակցել տվյալ ծառայության հետ. անվճար կանաչ գիծ 0800/12800 կամ unia.be





Բնակարանային հարցերով զբաղվող վալոնյան ընկերությունը տնօրինում է հանրային ծառայության բնակարանային ընկերությունները, որտեղ կարող եմ հերթագրվել՝ համապատասխան որոշակի պայմանների (չլինել սեփականատեր և ունենալ ցածր եկամուտ):

Ես դիմում եմ մեկ (միայն մեկ) բնակարանային ընկերության: Փաստաթղթի մեկ ձևը հնարավորություն է տալիս ինձ՝ դիմումս ընդլայնել այլ քաղաքներում: Դիմումների գրանցամատյանը կենտրոնացված է և նրա վարումը խիստ կարգավորվում է վալոնյան բնակարանային օրենսգրքով, որը սահմանում է մի շարք չափանիշներ և գերակայություններ:



Գրանցվելու համար լրացրնում են փաստաթուղթը և կցում պահանջվող փաստաթղթերը. հարկային մատյանից ստացված քաղվածքը, տնային տնտեսության կազմը՝ վերջին երեք տարիների ընթացքում բնակության ցանկով, ընթացիկ հարկվող եկամտի գումարի մասին փաստաթուղթ, ընտանեկան նպաստների մասին տեղեկանք:

Չնայած բնակարանների մեծ ֆոնդին, սոցիալական բնակարանային ֆոնդը դժվարանում է բավարարել բազմաթիվ դիմումները: Հերթի ցուցակները հաճախ շատ երկար են. հետևաբար, պետք է լինել համբերատար:

Մոցիալական Բնակարանային գործակալություն



Այն ընկերություն է, որը խթանում է մուտք գործել բնակարանային ծառայություններ, մատուցելով երաշխիք թե տանտերերին և թե վարձակալներին: Այն միջնորդ է հանդիսանում սեփականատերերի՝ ովքեր նախընտրում են վստահ լինել, և ցածր եկամուտ ունեցող վարձակալների միջև: Այն առաջարկում է յուրաքանչյուր հեռանկարային վարձակալին անհատական աջակցությունը:

Վալոնիայում դրանց թիվը կազմում է 28:

Pour s'y inscrire, il faut remplir des conditions de revenus et produire les documents demandés : attestation de revenus, copie de la carte d'identité, composition de ménage, certificat de bonne vie et mœurs

Բնակարանային հարցերով զբաղվող վալոնյան ընկերության կայքը

 www.swl.be

Վալոնյան տարածաշրջանում գնման, վարձույթով տալու, պարզևավճարների մասին տեղեկություն ստանալու կայքը.

 <https://www.wallonie.be/fr/vivre-en-wallonie/habitat-et-energie>





Կարևոր հանգամանք է Ձեր տան մոտակայքում թերապևտի ընտրությունը, որին կվստահեք. նա կլինի ձեր ընտանիքի բժիշկը և ով կարգին վիճակում կպահի Ձեր բժշկական ամբողջ գործը: Խորհուրդ է տրվում նրա մոտ բացել, այսպես կոչված, ընդհանուր բժշկական գործ (DMG), որը թույլ կտա նվազագույնին հասցնել հանդիպումների ծախսերը: Հենց այդ բժիշկն է, ով, անհրաժեշտության դեպքում, ինձ կուղարկի մասնագետների մոտ:

Եթե ես ծանոթներ ունեմ այդ թաղամասում, ապա կարող եմ նրանցից խորհուրդ հարցնել: Իսկ եթե ոչ ոքի չեմ ճանաչում, կարող եմ փնտրել իմ տարածքի հեռախոսագրքում D տառի տակ (ինչպես docteur) կամ ինտերնետային կայքերում:

Խորհրդակցության համար ներկայանում եմ բժշկի աշխատասենյակ՝ ընդունելության ժամերին, կամ եթե իվիճակի չեմ ինքս գնալու, կարող եմ խնդրել, որ նա գա տանը ինձ զննելու (հավելյալ վճարումով):





Ընդհանրապես, յուրաքանչյուր բժիշկ ունի ընդունելության հստակ ժամեր, կամ ընդունում է նախնական գրանցման հիման վրա:

Միայն արտակարգ իրավիճակների դեպքում, հանգստյան օրերին և գիշերվա ժամերին կարող եմ դիմել հերթապահ բժշկին կամ գնալ հերթապահ բժշկական կենտրոն: Հարկավոր է զանգահարել 1733 հեռախոսահամարին՝ պարզելու, թե ուր է հարկավոր գնալ: Հերթապահ բժիշկների տվյալները տպագրված են տարածքային շաբաթաթերթում, որը բաժանվում է ամեն շաբաթ փոստարկղում: Թերթում տեղ են գտնում նաև շտապ օգնության, հրշեջ ծառայությունների տվյալները: Պետք է գիտակցել, որ այս դեպքում ծառայությունների արժեքը կլինի ավելի բարձր:

Հերթապահ դեղատների ցանկը նույնպես հրատարակված է լրագրում, www.pharmacie.be կայքում և փակցված բոլոր դեղատների ցուցափեղկերին: Մինչդեռ դեղերը կտրամադրվեն միայն բժշկի դեղատոմսի հիման վրա, որտեղ նշված կլինի հրատապությունը:

Gardes

Pharmacies de garde

Pour connaître la pharmacie de garde la plus proche de votre position actuelle.

Pharmacie du Grand Pré Rue du Champ, 45	098/25.876
Pharmacie Lemoine Rue de la Chanette, 68	098/35.122
Pharmacie Envaigne Rue de la Forge, 215	098/96.108

Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում միայն կարող եմ գնալ ուղիղ հիվանդանոց: Արտակարգ իրավիճակների ծառայությունը գործում է 24/24 ժամ:



Թերապևտի նկատմամբ հարկավոր է ունենալ վստահություն, նա ուղղություն է տալիս իմ բուժումներին և հետևում նրանց ընթացքին: Եթե ես խորհրդակցում եմ մասնագետի հետ, հարկավոր է ընտանեկան բժշկից ճշտել բուժման ընթացքի արդյունավետությունը: Օրինակ՝ մանկաբույժը կարող է երեխայիս նշանակել արյան անալիզ. այդ դեպքում, ես ինքս պետք է հանդիպում նշանակեմ, այնուհետև խնդրեմ, որ արդյունքները ուղարկվեն միաժամանակ և մանկաբույժին, և թերապևտին: Այդպիսով, ես կարող եմ, ամեն փուլում, հույսս դնել ընտանեկան բժշկիս վրա՝ բուժման զարգացմանը հետևողական լինելուն:





Դա մի տեղ է, որտեղ ես կարող եմ գտնել հիմնական բժշկական բոլոր ծառայությունները. բժիշկ, բուժքույր, գինեկոլոգ, մերսորդ...երբեմն սոցիալական աշխատող, հոգեբան, դիետոլոգ...Բժշկական կենտրոնում կարելի է նաև դիմել թեթև վիրաբուժական գործողությունների համար: Յուրաքանչյուր անձ, ով ունի բժշկական ապահովագրություն և համատիրության բնակիչ է, կարող է գրանցվել բժշկական կենտրոնում: Գրանցումից հետո խորհրդակցությունները ամբողջովին անվճար են՝ անկախ տեսակցությունների քանակից և միայն ուրիշ բժիշկների մոտ խորհրդակցելու հրաժարվելու պայմանով (բացառությամբ հանգստյան օրերի և շտապ օգնության դեպքում):

Եթե ես չունեմ բժշկական ապահովագրություն, բժշկական կենտրոնում կարող եմ ինձ օգնել լրացնելու անհրաժեշտ փաստաթղթերը կամ դիմել Սոցիալական գործողությունների հանրային կենտրոնին (CPAS) անհետաձգելի բժշկական օգնության ծախսերում աջակցելու համար: Բժշկական կենտրոնները առաջարկում են նաև ամեն տեսակ համերաշխության ծառայություններ, ինչպիսիք են տեղեկատվական դասընթացները, գրուցելու համար հավաքներ...

Ինձ ամենամոտ բժշկական կենտրոնը գտնելու համար կարող եմ փնտրել www.maisonmedicale.org կայքում կամ հեռախոսային տեղեկատվական գրքում "Maison médicale", "Centre de santé" կամ "Collectif de santé" խորագրերի ներքո:



Ընտանիքի պլանավորում

Ընտանիքի պլանավորման կենտրոնները խորհրդապոհորեն ընդունում են սեռական, հղիության, ընտանեկան կամ հուզական կյանքին վերաբերող խորհրդի կամ խնամքի կարիք ունեցող մարդկանց: Այնտեղ կազմակերպվում են մշտական հերթապահության օրեր, առաջ նախնական պայմանավորվածության, կարիքի դեպքում, մարդկանց տալիս են բժշկական, հոգեբանական, իրավական կամ սոցիալական խորհրդատվություններ:

Ինձ ամենամոտ բժշկական կենտրոնը գտնելու համար կարող եմ փնտրել www.planning-familial.be կամ www.loveattitude.be կայքերում:

Հոգեկան առողջության պահպանման ծառայություններ

Հոգեկան առողջության պահպանման ծառայությունները (SSM) ընդունում են յուրաքանչյուրին (երեխաներ, դեռահասներ, չափահասներ և ծերեր), ովքեր գտնվում են վատ իրավիճակում (ունեն ամուսնական, ընտանեկան, դպրոցական դժվարություններ, անհանգստություն, դեպրեսիա և այլն): Նրանք առաջարկում են խորհրդատվություն հոգեբուժության, մանկական հոգեբուժության, հոգեբանության, խոսքի թերապիայի և հոգեշարժական ոլորտում: Այս խորհրդատվությունները վճարում են բժշկական ապահովագրական ընկերությունները, CPAS- ը կամ Fedasil- ը:

Հոգեկան առողջության ծառայության կենտրոն գտնելու համար կարող եք այցելել cresam.be կայք կամ լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ Ձեր ընտանեկան բժշկից:



Անկանոն բնակության կարգավիճակում գտնվող անձը, կարող է օգտվել առողջապահական ծառայություններից՝ բժշկի կողմից անհապաղ բժշկական օգնություն ստանալու անհրաժեշտությունը հաստատող տեղեկանքի առկայության պայմանով:

Այդ դեպքում հայցս ուղղում եմ Սոցիալական գործողությունների հանրային կենտրոնին (CPAS): Այն կարող է տալ բժշկական կամ դեղատան համար նախատեսված կտրոններ, ինչպես նաև այսպես կոչված ռեկվիզիտուար եթե վերաբերում է հիվանդանոցում որևիցե միջամտությանը: Որոշ արտակարգ իրավիճակներում հիվանդանոցի սոցիալական ծառայությունը կարող է անմիջապես կապվել Սոցիալական գործողությունների հանրային կենտրոնի (CPAS) հետ:




Բժշկական ապահովագրական ընկերությունը դա մի վարչական մարմին է, որը կառավարում է աշխատող քաղաքացիների վճարած գումարը՝ առողջապահական խնամքը ֆինանսավորելու համար: Դա բոլորի միասնությունն է, որը թույլ է տալիս յուրաքանչյուրին բուժվել հասանելի գումարով. գումարը գանձվում է միանգամից աշխատավարձերից կան եկամուտներից:

Կան բազմաթիվ բժշկական ապահովագրական ծառայություններ, որոնք մատուցում են նույն ծառայությունները, չնչին տարբերությամբ՝ քրիստոնեական, սոցիալիստական, ազատական, մասնագիտական, չեզոք բժշկական ապահովագրական ընկերություններ: Օժանդակ հաշմանդամության ապահովագրական ֆոնդը (CAAMI) հասարակական հաստատություն է, որը կատարում է նույն գործը ինչ բժշկական ապահովագրությունները: Ընտրում եմ ըստ իմ բնակության վայրի և փիլիսոփայական համակրանքի:



Օրինակ : 1) Հիվանդ եմ և բժիշկ եմ կանչում 2) Վճարում եմ տեսակցության համար 3) Գնում եմ բժշկական ապահովագրության գրասենյակ, որը ինձ ետ կվերադարձնի ծախսերս





Գրանցում



Երեք ամսից շատ կացության իրավունք ունենալու դեպքում կարող եմ ստանալ բժշկական ապահովագրություն: Ներկայանում եմ բժշկական ապահովագրության գրասենյակ անձս հաստատող փաստաթղթերով:

Լրացնում եմ հարցաթերթը և տալիս պահանջվող փաստաթղթերը՝ անձը հաստատող փաստաթղթի պատճեն, հայտարարագիր, որը կարելի է ձեռք բերել քաղաքային վարչությունից, Քաղաքապետարանի կողմից տրված բնակության վայրը հաստատող տեղեկանք, տեղեկանք Սոցիալական գործողությունների հանրային կենտրոնից (CPAS), եթե ստանում եմ սոցիալական օգնություն:

Պարտադիր տարեկան անդամավճար

Ես մուծում եմ պարտադիր անդամավճար, որը փոխվում է մի բժշկական ապահովագրական ընկերությունից մյուսը (10 - ից € / տաեկան Օժանդակ հաշմանդամության ապահովագրական ֆոնդին (CAAMI) մինչև 100 € / տարեկան): Այդպիսով, ես ունենում եմ բժշկական ապահովագրություն ինձ և իմ խնամակալության տակ գտնվող անձանց (կողոկից, երեխա...) համար:

Բժշկական ապահովագրությունները առաջարկում են այլ առավելություններ՝ հավելավճարի դեպքում 2012թ. հունվարի 1-ից այդ հավելավճարը պարտադիր է, բացառությամբ՝ Օժանդակ հաշմանդամության ապահովագրական ֆոնդի (CAAMI):



IM = Հավելյալ միջամտություն

Եթե ես ստանում եմ ֆինանսական աջակցություն CPAS- ից, ապա ինքնաբերաբար օգտվում եմ IM- ից: Բժիշկների խորհրդատվությունները, դեղերը և հասարակական տրանսպորտը (գնացք, ավտոբուս, տրամվայ և մետրո) ավելի մատչելի են: Կան նաև զեղչեր որոշ հանգստի վայրերի համար, ինչպիսիք են լողավազանները:

Եթե ես օգտվում եմ հավելյալ միջամտությունից, կարող եմ հայց ներկայացնել երրորդ կողմի վճարման կիրառման համար: Երրորդ կողմի վճարում անվանում են որոշակի միջամտությունների համար ամբողջ գումարի նախավճարից զերծ մնալու հնարավորությունը. վճարում եմ միայն օգտագործողի վարձը (իմ անձնական ներդրումը), իսկ մնացածը բժշկին փոխհատուցում են անմիջապես բժշկական ապահովագրական ընկերությունները:

Եթե իմ տնային տնտեսության եկամուտը ցածր է, ապա կարող եմ հայց ներկայացնել՝ հավելյալ միջամտություն ստանալու հնարավորության համար (IM):



IM- ին դիմելու համար ես լրացնում եմ ընտանիքի բոլոր անդամների կողմից ստորագրված պատվո հռչակագիրը և տրամադրում նախորդ տարվա հարկային հայտարարության փաստաթուղթը:

Հոսպիտալացման ապահովագրություն

Հիվանդանոց պարկելը կարող է շատ թանկ արժենալ, նույնիսկ եթե ես ունեմ բժշկական ապահովագրություն: Հենց այդ պատճառով է, որ գոյություն ունի հոսպիտալացման ապահովագրություն, որը երաշխավորում է ծածկել բոլոր ծախսերը: Տարբեր ապահովագրական ընկերություններում այդ ապահովագրության արժեքը կարող է լինել տարբեր:



Գրանցվելուցս հետո ստանում եմ վարչական կարևոր փաստաթղթեր

Անդամագրքույկ (գոյություն ունի ոչ բոլոր բժշկական ապահովագրական ընկերություններում)

Այս գրքույկը իմ սոցիալական քարտի բաղկացուցիչ մասն է: Այնտեղ գրված են՝

- Բաժանորդի և նրա խնամքի տակ գտնվող անձանց ազգանունները,
- անունները, ծննդյան տարեթվերը և ընտանեկան կարգավիճակները
- Բժշկական ապահովագրության գրանցման համարները հասցեի կամ կարգավիճակի փոփոխության վերաբերյալ բժշկական
- ապահովագրական ընկերությանը տեղեկացնելու ծանուցում
- Օգտակար տեղեկություններ ընդունելության ժամերի, ծառայությունների հեռախոսահամարների վերաբերյալ

Պիտակներ

Ես նաև ստանում եմ պիտակներ, որտեղ ներառված են իմ տվյալները: Դրանք լրացուցիչ են իմ սոցիալական քարտին և կպահանջվեն տարբեր բժշկական ծառայությունների համար (հիվանդանոցում խորհրդակցելու, արյան անալիզի, խնամքի վկայագրի փոխհատուցման):



Ուրեմն, ես պետք է միշտ պիտակներ ունենամ իմ դրամապանակում:



Բուժօգնության հավաստագիր


Բժշկի մոտ խորհրդակցության համար վճարելուց հետո, ես երբեմն ստանում եմ բուժօգնության հավաստագիր, որը տրվում է թղթային տարբերակով, որը ծառայում է որպես վճարման ապացույց: Այնտեղ կաշուն պիտակ փակցնելուց հետո, տանում եմ բժշկական ապահովագրական գրասենյակ, որը ինձ փոխհատուցում է կատարված ծախսերի մի մասը: Հնարավոր է նաև, որ բժիշկն էլեկտրոնային եղանակով վկայագիրն ուղարկի առողջության ապահովագրական ընկերությանը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԺՇԿԱԿԱՆ ԲՈԼՈՐ ԾԱԽՍԵՐԸ ՉԵՆ ՀԱՏՈՒՑՎՈՒՄ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ:

Դեղատոմս

Երբ բժիշկն ինձ դեղեր է նշանակում, նա լրացնում է դեղատոմս: Ես այն տանում եմ դեղատուն իմ SIS քարտի հետ:

Այդպիսով, ես վճարում եմ դեղերի արժեքի միայն մի մասը: Որոշ դեղեր, որոնք համարվում են "հարմարավետության", չեն փոխհատուցվում:





Աշխատանքի որոնումը կարող է լինել ինքնաբերական: Այնուամենայնիվ, հաղորդակցության և տեղական մշակութային ազդակները կարող են կարևոր դեր խաղալ: Ուստի օգտակար է լավ տեղեկանալ մինչև ձեռնարկելը. բավարար չէ ունենալ լավ առավելություններ, անհրաժեշտ է դրանք արժեքավորել և դրսևորել այնպես, ինչպես ակնկալում է գործատուն: Դրա համար կան մասնագիտացված ծառայություններ, որոնք կարող են ինձ ուղղություն ցույց տալ:

Հարցեր, որոնք պետք է տամ ինքս ինձ

	Այո	Ոչ	
Արդյոք կարող եմ ձեռք բերել անհրաժեշտ փաստաթղթերը			Լրացնում եմ թղթապանակս՝ Դիպլոմի համարժեքը, վկայագիր, վերապատրաստման վկայական, ատեստատներ, գրանցան թուղթ՝ որպես աշխատանքի հայցատու
Արդյոք կարող եմ հստակ ներկայացնել իմ գործնական նախագիծն ու ունակությունները			Իրականացնում եմ հմտություններիս խմբագրումը, օրինակ «աշխատանքի և մասնագիտական վերապատրաստման վալոնական (FOREM) կենտրոնում», սոցիալ մասնագիտական ինտեգրման որևէ մարմնում, ինտեգրացիայի տարածքային կենտրոնում
Արդյոք ես ունեմ լավ ինքնակենսագրական և մոտիվացիոն նամակը: Որոնք են իմ առավելությունները, ունակություններն ու հմտությունները: Արդյոք դրանք համապատասխանում են գործատուի պահանջներին:			



	Այո	Ոչ	
Արդյոք ես մենակ եմ որոնում: Արդյոք ունեմ բավարար տեղեկություններ, օրինակ որոշելու համար ուղարկել անմիջապես դիմումներ, թե պատասխանել աշխատանքային առաջարկներին: Արդյոք գիտեմ, թե որտեղ գտնել աշխատանքային առաջարկներ			Ես խորհուրդ եմ հարցնում FOREM ում, թաղային սոցիալական տանը, սոցիալ մասնագիտական ինտեգրման մարմնում... կամ մասնակցում եմ աշխատանքի որոնման խմբակի
Արդյոք ես արդեն ներկայացել եմ աշխատանքային հարցազրույցին: Ինչ պետք է ասեմ: Ինչպես պետք է ներկայանամ:			Ես խորհուրդ եմ հարցնում որևէ մարմնում, որը առաջարկում է աշխատանքային քոուչինգjobcoaching կամ հմտանում եմ աշխատանքային որոնման խմբակներում



FOREM մասնագիտական վերապատրաստման և աշխատանքի հասարակական ծառայություն է Վալոնիայում: FOREM-ում է, որ ես գրանցվում եմ, որպես աշխատանք փնտրող: Իր կայքում, www.leforem.be, ես կարող եմ առցանց օգտվել մի շարք ծառայություններից՝ աշխատանքային առաջարկներ, վերապատրաստումներ, աշխատանքների վերաբերյալ տեղեկություններ, աշխատանքային սրահներ... Երբ ես աշխատանք փնտրող եմ, ապա այստեղ խորհրդատուները հետևում են իմ գործին և կարող են ինձ ուղղություն ցույց տալ:

Որպես աշխատանք փնտրող, ես պետք է լրացնեմ մի շարք պարտավորություններ, մասնավորապես աշխատանքի ակտիվ որոնման պարտավորագիրը: Եթե ստանամ ծանուցագիր, ապա պարտավոր եմ ներկայանալ: Ես պահում եմ իմ բոլոր գործնական քայլերի հետքերը և տեղեկացնում եմ իմ խորհրդատուին վիճակիս ցամկացած փոփոխության մասին:

Մեկ այլ ճանապարհ ևս հանդիսանում է շատ արդյունավետ՝ աշխատանք գտնելու համար, կապերի ցանցը, որը ես հյուսում եմ իմ շուրջ: Հաշվարկները ցույց են տալիս, որ աշխատանքի հնարավորությունների մեծ մասը սերվում են խոսակցություններից. ծանոթները, ընկերները, բարեկամները հաճախ թանկ կապեր են: Շատ գործատուներ հակված են վստահել անձնական կարծիքին:

Ինտեգրման ռազմավարության շարքերում հարկ է գերակարգել վստահության կապերի ստեղծումը:



Պաշտոնակատար զբաղվածության գործակալությունները նույնպես հանդիսանում են արտոնյալ միջնորդներ աշխատանքային որոշ ոլորտումներում: Բելգիայում, բազմաթիվ տասնյակ գործարաններ գտնվում են Վալոնիում: Պաշտոնակատարը աշխատանքի է ընդունվում, պաշտոնակատար զբաղվածության գործակալությունների միջոցով, գործատուի հաշվին, որը ժամանակավորապես աշխատակցի կարիք ունի: Այս կարգի աշխատանքները կանոնակարգված են, և պաշտոնակատարը օգտվում է այն նույն իրավունքներից, ինչ մնացած աշխատակիցները՝ թոշակից, արձակուրդներից, բժշկական ապահովագրությունից...:

Որոշ գործակալություններ համամմբվել են մշակութային բազմազանություն հարցերի շուրջ:

Թերթերում, կրպակներում, ինտերնետում հրապարակված փոքրիկ հայտարարությունները ևս դասական միջոց են աշխատանք փնտրելու համար:

Այնուամենայնիվ, հայտարարություններ կարդալիս պետք է ցուցաբերել զգոնություն, չհայտարարագրված (սևով) աշխատանքների կամ խաբեությունների հանդիպելիս: Օրինակ ես խուսափում եմ հյուրանոցում ժամադրություններից...Այս տեսանկյունից, նախընտրելի է օգտվել հատուկ մամուլից և FOREM - ի հրապարակումներից:



Երբ հստակ սահմանեմ իմ ինքնություն պրոֆիլը, մասնագիտական նախագիծս և հմտություններս, կարող եմ կողմնորոշվել գործատուի հարցում և նրանց անմիջապես ուղարկել իմ թեկնածությունը: Նպատակաուղղված որոնման և կողմնորոշման պարագայում այս ռազմավարությունը համարվում է արդյունավետներից մեկը:

Ի վերջո բազմաթիվ սոցիալ-մասնագիտական ինտեգրման մարմիններ (OISP), տարբեր կազմակերպություններ, թաղային սոցիալական տներ և թաղապետարաններ առաջարկում են ծառայություններ, որոնք կուղեկցորդեն աշխատանքի որոնման լավ ռազմավարության զարգաման հարցում: Եթե ես չեմ տնօրինում գործողության բարդ մեխանիզմներին, ապա չեմ տատանվի դիմել իրենց փորձառությանը:

Դիպլոմի համարժեքը

Օտարերկրյա դիպլոմների մեծ մասի համար համեարժեքը ստանալու համար հարկավոր է դիմել Ֆրանսիական Համայնքի Համարժեքության Ծառայությանը:

Ուշադրություն՝ դիպլոմի համարժեքը ճանաչելու գործընթացը երկար է և պահանջում է մանրակրկիտ ձևով փաստաթղթերի համախմբում, որը կպատասխանի հստակ պահանջներին:

Օգտակար կայք՝ www.equivalences.cfwb.be 02 690 86 86



Աշխատանքի ընդունվելիս խտրականությունը արգելված է և պատժվում է օրենքով: Այնուամենայնիվ սա բավարար չէ, որպեսզի արմատախիլ անել այն կարծրատիպը և նախապաշարումները, որոնք բնութագրում են որոշ մտածելակերպեր: Հարկավոր է պատրաստ լինել դիմակայելու այսպիսի իրավիճակներին:

Եթե խտրականությունն ապացուցվի, ապա այն կարող է դատապարտվել:

Խտրականության դեպքում հարկավոր է ամբաստանել: UNIA (Հավասար հնարավորությունների միջդաշնային կենտրոն) անկախ հանրային ծառայություն է, որի իրավական առաքելությունն է հավասարության խթանումը և խտրականության դեմ պայքարը: Նա կարող է գործել զատորոշված անձի անունից: Խնդիր առաջանալու դեպքում հնարավոր է խորհրդակցել տվյալ ծառայության հետ. անվճար կանաչ գիծ 0800/12800 կամ unia.be





Բելգիայում, աշխատանքը կանոնակարգված է տարբեր կերպ ըստ ոլորտի: Ընդհանուր առմամբ խոսքը գնում է մասնավոր պետական ոլորտների, առևտրային ոչ առևտրային սեկտորի մասին: Հատկապես, յուրաքանչյուր ոլորտ, օրինակ շինարարության սեկտորը, կանոնակարգված է համատեղ հանձնաժողովի կողմից, որը սահմանում է աշխատանքային պայմանները:

Ուստի աշխատանքը ներառում է աշխատանքային պայմանագիր: Դա օրինական հանձնառություն է, որը հարաբերություն է հաստատում առնվազն երկու կողմերի միջև, և որն առաջ է բերում իրավունքներ և պարտավորություններ: Սովորաբար կողմերն անվանվում են «գործատու» և «աշխատող»:

Աշխատանքային պայմանագիրը ծնում է, երկու կողմերի համար էլ, պարտավորություններ (ժամանակացույց, առաջադրանք, աշխատավարձ, արձակուրդ...): Գործատուն և աշխատողը պարտավոր են հարգել միմյանց: Պարտավոր են հարգել և պաշտպանել պայմանագրի իրականացման կարգը և բարոյական նորմերը:



Գոյություն ունեն պայմանագրի բազմաթիվ ձևեր՝ լրիվ դրույք, կես դրույք, փոխարինող, ժամանակավոր պաշտոնակատար (գործատուն ժամանակավոր պաշտոնակատար աշխատանքների գործակալությունն է), որոշակի ժամկետով (սկսման և ավարտի ամսաթվերը նշված են պայմանագրում), անորոշ ժամկետով (պայմանագրի ժամկետները նշված չեն)...



Երբ գործատուն կամ աշխատողն ուզում է լուծարել պայմանագիրը, ապա կարգը նախատեսում է դրա մասին ծանուցման ժամկետ. նվազագույն ժամկետը պետք է հարգվի մինչ աշխատանքի լքումը: Այդ ժամկետը փոփոխվում է՝ ելնելով պայմանագրի տեսակից և վիճակից:

Այսպիսով ես վստահ եմ, որ կնքում եմ աշխատանքային պայմանագիր ճիշտ և պատշաճ կերպով: Առաջին անգամ կամ կասկածի դեպքում, խորհրդի կարգով դիմում եմ որևէ արհմիությանը, որը պաշտպանում է աշխատողների շահերը, խորհուրդ եմ հարցնում FOREM -ին կամ էլ որևէ սոցիալական ծառայությանը:



Աշխատանքային իրավունք

Օտարերկրյա աշխատողների զբաղվածությունը կանոնակարգված է 1999թ-ի ապրիլի 30-ի օրենքով և 1999թ-ի հունիսի 9-ի թագավորական դատավճռով (ամենը ինչ վերաբերում է աշխատողներին): Օտարերկրյա աշխատողների աշխատանքային շուկայի հասանելիության կանոնները, ինչպես նաև կացության կարգավիճակ ստանալու կանոնները բարդ են:

2019 թվականից ի վեր, իմ կացության թույլտվության փաստաթղթում նշվում է, ես իրավունք ունեմ աշխատելու թե ոչ:

Դրա իրավունքը ունենալու դեպքում, իմ կացության թույլտվության փաստաթղթի վրա նշված է.

- «Աշխատանքային շուկա Սահմանափակ մուտք ». Ես իրավունք ունեմ աշխատելու մեկ գործատուի մոտ և մեկ գործառույթով. Նրա, ով ստացել է ինձ աշխատանքի ընդունելու թույլտվությունը, միակ աշխատանքային թույլտվության հայց ներկայացնելու գործընթացում:

ԿԱՄ

- «Աշխատանքային շուկա Անսահմանափակ մուտք ». Ես իրավունք ունեմ աշխատելու ցանկացած գործատուի մոտ՝ վարձատրվող բոլոր մասնագիտություններով: Լրացուցիչ այլ գործողություններ կատարելու անհրաժեշտություն չկա:

Եթե չունեմ աշխատելու թույլտվություն, փաստաթղթում նշվում է. «Աշխատանքային շուկա. Ոչ»:



Օգտակար հասցե՝

SPW – DG opérationnelle Economie, Emploi et Recherche
Département Emploi et Formation professionnelle
Direction emploi et Permis de travail
Place de Wallonie, 1 – bâtiment 2
5100 JAMBES



Ազատ ձեռներեց աշխատելու համար (լինել սեփական գործատուն), յուրաքանչյուր անձ, որը չունի բելգիական քաղաքացիություն, պետք է մասնագիտական քարտ ստանա Փոքր և Միջին Ձեռնարկություն Ծառայությունից:

Մինչդեռ որոշ օտարերկրացիներ դրա անհրաժեշտությունը չունեն.

- Եվրոմիության անդամ 25 երկրի քաղաքացիները և նրանց ընտանիքի որոշ անդամներ, որոնք ապրում են իրենց հետ միասին
- Փախստականի կարգավիճակ և անժամկետ կացության իրավունք ունեցողները
- Բելգիացու զուգընկերը և նրա ընտանիքի որոշ անդամներ, ովքեր ապրում են իր հետ
- Կողակիցները, ովքեր օգնում են իրենց ամուսնուն կամ կնոջը իր աշխատանքում
- Գործնական այցով ժամանած անձիք, բանախոսները, ժուռնալիստները, սպորտսմենները և արվեստագետները, եթե կացության ժամկետը չի գերազանցում շարունակական երեք ամիսը
- Օտարերկրացի ուսանողները, ովքեր իրենց ուսման շրջանակներում ստաժ են անցնում
- ...

Պետք է բավարարել այլ պայմաններ ևս. որոշ մասնագիտություններ կանոնակարգված են:

Առևտրի կամ արհեստի գրանցում պահանջող գործունեության համար հարկավոր են կառավարման գիտելիքներ: Հարկ եղած դեպքում կարող եմ քննություն հանձնել ժյուրիի կենտրոնական ծառայությունում:



համարժեքությունը պետք է ճանաչվի, հետեւաբար, հարկավոր է դիմել Ֆրանսիական Համայնքի Համարժեքության Ծառայությանը:

Վարչական պահանջները պետք է բավարարվեն, հիմնականում:

Անդամագրվել սոցիալական ապահովագրության հիմնադրամին (վճարել եռամսյակային անդամավճար):

Պահանջել ձեռնարկության համար հավատարմագրված ընկերությունում:

Պահանջել առևտրի գրանցամատյանում գրանցում. (բացառությամբ որոշ մասնագիտությունների՝ ազատ մասնագիտությունները, ֆերմերները, ...):

Հայտնել աշխատանքի մասին Ավելացված Արժեքի Հարկին (լրացնել հայտարագիրը և վճարել յուրաքանչյուր եռամսյակի գումարներ (բացառությամբ որոշ մասնագիտությունների՝ դերասանների, երգիչների, մոդելների, DJ, ազատ մասնագետների, ...):

Բացել հատուկ հաշվի համարը ազատ ձեռներեցի գործունեության համար:

Հաշվապահական հաշվառում կարգին և պատշաճ վիճակում պահել: Ցանկալի է դիմել հաշվապահի ծառայություններին:

Անդամագրվել որևիցե բժշկական ապահովագրական ընկերությանը Վճարել հարկեր, ամենամյա հայտարարության հիման վրա:

Օգտակար կայք.



<https://economie.fgov.be/fr/themes/entreprises/creer-une-entreprise/les-conditions-dacces-la>



Չհայտարարված աշխատանքը կոչվում է "սևով" աշխատանք: Դա վարձատրվող գործունեություն է, սակայն պետական մարմիններին այդ մասին չտեղեկացված: Հետևաբար այն գերծ է մնում Բելգիայի օրենքի համապարտ պատասխանատվության բոլոր կանոններից (հարկեր, սոցիալական անդամավճար...) և հետևաբար պատժվում է օրենքով:

Օրինակ՝ Հարևանուհիս առաջարկում է իր տունը վերանորոգել և ինձ վճարում է մեկ ժամվա համար 5 եվրո:

"Սևով" աշխատանքի ժամանակ աշխատանքային պայմանագիր չի կնքվում: Այսպես կոչված գործատուն չի լրացնում իր պարտականությունները հարկային և սոցիալական դաշտում: Բազմաթիվ վտանգներ կշռում են այս կարգի աշխատանքի վրա և կարող են թողնել ծանր հետևանքներ ինչպես գործատուի, այնպես էլ աշխատողի վրա:

Առանց աշխատանքային պայմանագրի ինձ մասամբ կամ բոլորովին չվճարելու վտանգը մեծ է (օրինակ՝ հավելյալ ժամերի մոռացությունը): Խաբեություններն ու հիասթափությունները հաճախ են լինում:

Սոցիալական անվտանգության հետ կապված ոչ մի իրավական պահանջ չեն կարող ներկայացնել (անաշխատունակություն, մայրություն կամ հղիություն, հաշվանդամություն, մահ, կենսաթոշակ և գործազրկություն): Վթարի դեպքում ես ոչ մի կերպ պաշտպանված չեմ: Ոչ ապահովագրություն, ոչ էլ բողոքարկում:



Գործատուն ինձնից կարող է պահանջել ինչ ցանկանա. օրինական աշխատավարձից ցածր վարձատրությամբ աշխատել, օրենքով նախատեսված ժամերից դուրս աշխատել, ինձ աշխատանքից ազատել երբ ցանկանա...

Եթե ես ստանում եմ գործազրկության նպաստ կամ սոցիալական օգնություն, կարող եմ ենթարկվել տուժի, զրկվել օգնությունից և նպաստից, նույնիսկ ստիպված լինել վերադարձնելու ստացած նպաստը:

Մատնություններն ու ստուգումները հաճախ են, որոնք կարող են ավարտվել տուգանքներով և ուրիշ պատժամիջոցներով:

Սոցիալական Օրենսդրության տեսչությունը իրավասու է աշխատանքային օրենսդրությանը վերաբերվող հարցերում: Նա զբաղվում է փոխհատուցման, նախնական ծանուցագրի, աշխատանքի ժամկետի և ժամանակի հետ կապված խնդիրներով: Նա կարող է ստուգումներ անցկացնել աշխատավայրում կամ իր մտահաղացմամբ, կամ բողոքի դեպքում, աշխատանքային կանոնակարգին հետևողական լինելու համար:

Խնդրի դեպքում, անվճար, կարող եմ դիմել Սոցիալական օրենսդրական տեսչությանը կամ Աշխատանքային դատարան: Կարող եմ նաև խորհրդի կարքով դիմել որևէ արհմիությանը:



Իշխանության կողմից քաղաքացիներին ամենամոտը դա քաղաքապետարանն է: Բելգիայում դրանց թիվը հասնում է 589-ի. Վալոնիայի համայնքները և 262 քաղաքները բաժանվում են 5 նահանգների միջև՝ Բրաբան վալոն, Հենո, Լիեժ, Լյուքսեմբուրգ և Նամյուր:

Քաղաքապետարանի գործունեության բոլոր շրջանակները բխում են բնակիչների ընդհանուր պահանջներից. հասարակական կարգուկանոնի պահպանում, քաղաքացիական կացության և բնակչության գրանցումների կառավարում, ամուսնություններ, շրջապատի մաքրություն, CPAS, որը կառավարում է սոցիալական օգնությունը, հանրային աշխատանքներ, բնակեցում, հանրային կրթություն...

Իմ գործընթացին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի համար դիմում եմ տարածքային վարչական մարմնին: Մասնավորապես նրան եմ տեղյակ պահում իմ բնակության վայրի մասին: Ոստիկանը կայցելի ինձ, որպեսզի ստուգի իրոք այդտեղ եմ ապրում. իր զեկուցման հիման վրա վարչական մարմինը ինձ կտա բնակության վայրը հաստատող տեղեկանք: Այդ տեղեկանքի պահանջը կզգացվի հետագա բազմաթիվ քայլերի ժամանակ:

Օտարերկրացիների հարցերով զբաղվող բաժինը կառավարում է բնակության իրավունքին վերաբերյալ կոնկրետ հարցեր: Այն անձամբ որոշում չի ընդունում. կատարում է արտաքին քաղաքական գերատեսչության կարգադրությունները:



Իմ կացության քարտի ժամկետը տարածքային վարչությունում եմ երկարացնում կամ վերցնում նորը, հայտնում եմ իմ հասցեի կամ ընտանիքի կազմի փոփոխությունը:

Տվյալ համայնքում իմ կացության ժամանակահատվածում կարող եմ օգտվել համայնքի կողմից իր բնակչությանն առաջարկված ծառայություններից:

Ժամանելունս պես տեղեկանում եմ այդ ծառայությունների և տարածքային մասնաճյուղերի մասին, որտեղ կարող եմ դիմել իմ կարգավիճակը կարգավորելու համար:



C.P.A.S. = Սոցիալական գործողությունների հանրային կենտրոն



C.P.A.S.

Սոցիալական գործողությունների հանրային կենտրոնը դա մի համայնքային համերաշխության ծառայություն է, որը ֆինանսավորվում է աշխատող քաղաքացիների հարկերի կողմից: Այն օգնություն է կազմակերպում տվյալ համայնքի տարածքում սոցա-հոգեբանական, սոցիալական, ֆինանսական և նյութական դժվարություն ունեցող մարդկանց համար: Բելգիայում, յուրաքանչյուր ոք իրավունք ունի սոցիալական օգնության, վերջինիս նպատակն է հնարավորություն տալ ամեն մեկին մարդկային արժանապատիվ կյանք վարել: Սոցիալական օգնություն ստանալու համար դեռ պետք է համապատասխանել է մի շարք չափորոշիչների և ներկայացնել պահանջվող փաստաթղթերը:



C.P.A.S ներկայանալուն պես, մի սոցիալական աշխատող է նշանակվում է իմ կարգավիճակը ուսումնասիրելու և գործ կազմելու համար: Ցանկացած դիմում ենթակա է ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցիչներից կազմված խորհրդի որոշմանը: Սոցիալական աշխատողը նրանց ներկայացնում է իմ պահանջները և այնուհետև ինձ տեղյակ պահում նրանց որոշման մասին:



Ինչպես յուրաքանչյուր վարչական գործողություն, սա նույնպես կախված է բարդ և խիստ կանոններից. նախևառաջ պետք է ստուգել, թե որ CPAS-ն է իրավասու. հիմնականում դա լինում է բնակության վայրինը, բայց կարող են հաշվի առնվել ուրիշ չափանիշներ:



Սոցիալական աշխատողը նախևառաջ փորձառու, վստահելի անձ է, որը լսում և փորձում է պատասխանել իմ հարցերին. Կարևոր է հասկանալ, որ նա չէ որոշումներ ընդունողը: Այն միջնորդ է անձի և որոշում ընդունող մարմինների միջև:

Ուշադրություն, ցանկացած տրամադրված օգնություն պայմանավորված է իմ բնակության և բնակության իրավունքի գործողության ժամկետի հետ: Ես ուշադիր պետք է լինեմ ժամանակին իմ փաստաթղթերի գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու և նախապես զգուշացնել իմ սոցիալական աշխատողին ցանկացած տեղափոխման մասին, որպեսզի ապահովվի իմ գործի փոխանցումը մյուս CPAS: Ցանկացած իմ իրավիճակի փոփոխություն հետևանքներ կունենա ինձ հատկացված օգնության պայմանների վրա:

Ընդ որում, օգնության տրամադրումը հիմնականում ենթարկվում է մի շարք պարտավորությունների (դասընթացներ, աշխատանքի փնտրում...): Ես շատ ուշադիր պետք է լինեմ կատարելու այդ պարտավորությունները և դրանց մասին տեղեկացնելու իմ սոցիալական աշխատողին: CPAS աջակցությանը տրվում միայն այն դեպքում, եթե չկա ուրիշ հնարավորություն բավարարելու սեփական կարիքները:



Սոցիալական աշխատողը ինձ հետ քննարկում է իմ կարգավիճակը և պատրաստում գրավոր հաշվետվություն:

Դիմումները կարող են լինել.

- Պահանջարկ սոցիալական աջակցություն՝ իմ կարիքները հոգալու համար: Ֆինանսական պահանջ տրանսպորտի համար:
- Ֆինանսավորման հայտ առաջին տանվարձը և վարձակալման երաշխիքը վճարելու համար:
- Պահանջարկ ներքին հարդարման դրամական պարզևի:
- Ֆինանսական պահանջ բժշկական ապրանքագրի վճարման կամ բուժական վերահսկողության համար:
- Պահանջարկ ուսման վարձի աջակցության համար:

Օրինակ


Ես գտել եմ մեկ սենյականոց բնակարան, որտեղ կարող եմ տեղափոխվել հունվարի 15-ին: Տանվարձը կազմում է 450 եվրո՝ կոմունալ ծախսերը ընդգրկված: Տանտերն ինձանից պահանջում է 2 ամսվա երաշխիք: Ես պետք է նաև որոշ ծախսեր կատարեմ տեղափոխվելուց առաջ, որը կազմում է 200 եվրո: Դասընթացներին հաճախելու համար ինձ հարկավոր է նաև ավտոբուսի մշտական տոմս: Մշտական տոմսի ամսեկան վճարը կազմում է 20 եվրո:



Իմ հարցերով զբաղվող սոցիալական աշխատողին դիմում եմ ընդհանուր սոցիալական օգնության համար: Դիմում եմ նաև կանխավճար ստանալ առաջին տանվարձը և երաշխիքը վճարելու համար, որը կփոխհատուցեմ ըստ առաջարկված պլանի: Դիմում եմ նաև ինձ տրամադրել մինչև հունվարի 31-ը գոյատևելու կանխավճար և ավրոբուսի մշտականը տոմսի գումար:

Կանխավճարը դա գումարային վարկ է: Այն ներգրավում է փոխհատուցում: Կան նաև ոչ-փոխհատուցելի օգնությունների, որոնք ինչպես արդեն բառն է նշում ենթակա չեն մարմանը:

Սոցիալական աշխատողը ներկայացնում է իր սոց քննումը Խորհրդին և ինձ փոխանցում որոշումները: CPAS-ն ինձ ուղարկում է հաստատված որոշումը պատվիրված նամակով: Եթե համաձայն չեմ Խորհրդի որոշմանը, ապա կարող եմ 30 օրվա ընթացքում բողոք ներկայացնել. տվյալ դեպքում դիմում եմ փաստաբանի կամ որևէ իրավական ծառայության օգնությանը, որը անվճար կբողոքարկի Աշխատանքային Դատարանում:



Խորհուրդը կհատկացնի օգնությունը ըստ սոցիալական քննման գնահատմանը: Եթե ես ապրում եմ որևիցե մեկի կամ որևիցե մեկը կարող է ապահովել իմ կարիքների նույնիսկ որոշ չափով, ապա օգնությունը կարող է լինել մասնակի կամ մերժվել:



Երիտասարդների իրավունքները պաշտպանող ծառայություններ

Նրանք տեղեկացնում են երիտասարդներին իրենց իրավունքների մասին: Երիտասարդներին օգնում են իրենց իրավունքները պաշտպանել դպրոցում, աշխատանքային վայրում, երիտասարդների բարեկեցությանը, օտարերկրացիների իրավունքներին վերաբերող հարցերում: Նրանք լիազորված են պայքարել սոցիալական խտրականության դեմ և խթանել երիտասարդների և ընտանիքների ինքնավարությանը:

Նրանց ծառայությունները անվճար են և շաբաթվա ընթացքում կազմակերպվում են հերթապահ ընդունելություններ:



www.sdj.be

Ընտանիքի պլանավորման կենտրոն և ընտանեկան, ամուսնության և սեռական տեղեկատվության և աջակցության կենտրոն

Նրանք ընդունում և տեղեկացնում են խորհրդի կարգով հղիության, հակաբեղմնավորիչների և փոխանցվող սեռական հիվանդությունների մասին:



www.loveattitude.be/centres-de-planning



Ծննդյան և մանկության գրասենյակ

Այն ապահովում է անվճար հղիությունների հսկողությունը և մանկան զարգացումը (առողջապահություն, պատվաստումներ, սնունդ, խոսակցականը ...): Այն կազմակերպում է նաև երեխաներին պահելու ծառայություններ. երեխաների մեկօրյա մանկապարտեզներ, բաց տներ, մանկամսուրներ, փորձառու խնամակալներ... (Այս ծառայությունները վճարովի են):



www.one.be

Ծառայություն հիվանդների համար

Երբ ընդունակ չեմ տեղաշարժվելու CPAS-ի կողմից կազմակերպվում են սննդի տուն առաքման ծառայություններ, իսկ սարքավորումների տրամադրում (հենակներ, անթացույ, սայլակ...) կազմակերպվում է Կարմիր խաչի կամ բժշկական ապահովագրության կողմից:



Յուրաքանչյուր քաղաքապետարան կազմակերպում է թափոնների հավաքում և մշակում: Այս ծառայության ֆինանսավորումը ներառում է քաղաքային հարկ 1 (աղբ), որը տատանվում է մի քաղաքից մյուսը: Օրինակ՝ Լիեժում, գումարը կազմում է 85€/տարեկան մեկ անձի և 140€/ տարեկան ընտանիքի համար: Ուշադրություն, այս տուրքը ենթակա է վճարման ընթացիկ տարվա հունվարի 1-ին. տեղափոխման դեպքում, նախկին բնակության վայրի քաղաքապետարանին վճարած գումարը մնում է ուժի մեջ:

Յուրաքանչյուր տնային տնտեսությունից պահանջվում է տեսակավորել թափոնները ըստ քաղաքապետարանի տված հրահանգների: Թափոնների տեսակավորումը պարտադիր է: Դրա անտեսումը կարող է հանգեցնել տույժի:

Հիմնականում, տեսակավորումը կազմակերպվում է հետևյալ կերպ

Գունավոր պարկը կամ պաշտպանիչ սարքով աղբարկղերը նախատեսված են կենցաղային աղբի համար: Այն վերամշակման ենթակա չէ: Այդ պարկերը հավաքվում են ամեն շաբաթ, ըստ գրաֆիկի՝ տրամադրված քաղաքապետարանի կողմից:



¹ Ցածր եկամուտների դեպքում կարող էք ներկայացնել տուրքի վճարելուց ազատվելու դիմում



Մեկ այլ գույնի պարկ նախատեսված է PMC-ին (պոլիէթիլեն, մետաղներ, ըմպելիքների տուփեր). այնտեղ հարկավոր է գցել պոլիէթիլենային փաթեթավորումներ և շշեր, պահածոների տուփեր, կոսմետիկայի և սննդամթերքի աերոզոլներ, փոքր մետաղյա շշեր, ըմպելիքների տուփեր...(կոչվում են նաև աղյուս փաթեթներ) Ուրիշ ոչին պետք չի գցել այդ պարկի մեջ, հակառակ դեպքում կենթարկվեք պատժի: Պարկերը հավաքվում են պարբերաբար, ըստ ժամանակացույցի՝ տրամադրված քաղաքապետարանի կողմից: Ուշադրություն, կախված իմ բնակության վայրից, որոշ պլաստմասե կամ մետաղական առարկաները PMC-ներ չեն: Կասկածի դեպքում հիմնվում են PMC պարկի վրա տպված նկարների և բացատրությունների վրա:



Թղթերը և ստվարաթղթերը պետք է պահվեն առանձին: Նրանք փաթեթավորվում կամ հավաքվում են ստվարաթղթե մի տուփում: Թղթերը նույնպես հավաքվում են ըստ ժամանակացույցի՝ տրամադրված քաղաքապետարանի կողմից:



Թափոնների տեսակավորում և տուրքեր



Մեծածավալ իրերը չի կարելի նետել է աղբի մեջ: Հատուկ հավաքում նախատեսված է ամիսը մեկ անգամ, կամ խնդրանքով, զանգահարելով քաղաքապետարանի կողմից տեղեկացված հեռախոսահամարով՝ մեծ իրեր, մետաղյա առարկաներ, կահույք, ներքնակ ... Դրանք կարելի է հանել փողոց միայն հավաքելու օրը:



Ուշադրություն, էլեկտրատնտեսական սարքերը, հեռուստացույցը, Hi-Fi, video, շինարարական աղբը չեն թույլատրվում, դրանք պետք է տանել բեռնարկղերի հրապարակ:

Ապակյա տարաները պետք է թափել դրանց համար նախատեսված գնդերի մեջ, որոնք տեղադրված են հասարակական վայրերում. բանկաները, շշերը և ապակյա սրվակները դատարկ և մաքուր վիճակում նետվում են այդ գնդերի մեջ: Դրանք հարկավոր է տեսակավորել՝ սպիտակ տարաները առանձին, գունավորը առանձին: Որոշ քաղաքներում դրանք տանից են հավաքվում:





Որոշ համայնքներում, քաղաքային հարկը վճարելուց հետո, ստանում եմ կտրոններ՝ աղբի համար նախատեսված պարկերի դեմ փոխանակելու համար: Այդ պարկերի վերջանալու դեպքում, կարող եմ դրանցից գնել խանութից:

Որոշ համայնքներում գործում է պաշտպանիչ սարքով աղբարկղերի համակարգը: Քաղաքային հարկի վճարումը ինձ թույլ է տալիս աղբի անվճար հավաքման որոշակի քանակ: Թույլատրված նորման գերազանցելու ժամանակ հավելավճարը ես պետք է մուծեմ:

Այլ միջոցներ էլ գոյություն ունեն աղբի քանակը սահմանափակելու համար: Նպատակը՝ քաղաքացիներին հրահրելն է հնարավորին չափ քիչ թափոն ստեղծել:



Ո՞վ է որոշում

Օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակ



Օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակը կառավարում է օտարերկրացիների մուտքը Բելգիայի տարածք: Գրասենյակի գործի նախաքննման նպատակն է օտարերկրացուն մնալու կամ չմնալու իրավունք տալը, բացառությամբ ապաստան խնդրելու հայցին (այն հայցը ընդունում է և փոխանցում փախստականների և վտարանդիների գլխավոր հանձնակատարին): Բոլոր դեպքերում օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակն է տալիս, երկարաձգում կամ ետ վերցնում բնակության թույլտվությունը: Վտարման միջոցների (վերադարձ հայրենիք) որոշումը նույնպես պատկանում է գերատեսչությանը:



Ինչ կարգավիճակում էլ լինի գործընթացս, ես միշտ պետք է տեղեկացնեմ օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակին իմ կյանքում տեղի ունեցող փոփոխությունների մասին:



Փախստականների և վտարանդիների գլխավոր հանձնակատար (CGRA)

Փախստականների և վտարանդիների գլխավոր հանձնակատարը մի առթիվ է, որը զբաղվում է Բելգիայում փախստականների հարցերով. այն միակն է, որ կարող է որոշում ընդունել փախստականի կարգավիճակի կամ օժանդակ պաշտպանության հատկացման վերաբերյալ:

Փախստականների և վտարանդիների գլխավոր հանձնակատարը ծանուցում է ապաստան խնդրողին, ով կարող է ուղեկցվի իր փաստաթղթի կամ վստահված անձի կողմից:

Ուշադրություն, փաստաթղթի մասնագիտական աջակցությունը խորհապես խորհուրդ է տրվում:



Փախստականների և վտարանդիների գլխավոր հանձնակատարը ստուգում է, թե դիմորդը մտնում է ապաստան խնդրողների համար սահմանված (անձնի նկատմամբ հալածման վախ՝ ռասայի, կրոնի, ազգային խտրականության, քաղաքական կարծիքի կամ առանձնահատուկ սոցիալական խմբի անդամության պատճառներով) կամ օժանդակ պաշտպանության (լուրջ վտանգներ պատերազմող երկրում) պայմանների մեջ: Բացասական որոշման դեպքում, այն կարելի է բողոքարկել օտարերկրացիների դատական խորհրդում (CCE):



Օտարերկրացիների դատական խորհուրդ(CCE)

Օտարերկրացիների դատական խորհուրդը (CCE) անկախ դատական ատյան է, որը ուսումնասիրում է բողոքարկումները:

Փախստականների և վտարանդիների գլխավոր հանձնակատարի կամ օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակի կողմից ստացված բացասական պատասխանը կարելի է բողոքարկել վերը նշված ատյանում: Գործընթացը պետք է լինի գրավոր և փաստաբանի միջամտությունը անհրաժեշտ է, քանի որ բողոքարկումը ենթարկվում է խիստ կանոնների:

Կախված հանգամանքներից, բողոքարկումը կարող է կասեցնել (որոշումը «կասեցվում է», մինչև օտարերկրացիների դատական խորհրդի որոշումը), կամ ոչ (Տարածքը լքելու հրամանը տրվում է առանց օտարերկրացիների դատական խորհրդի որոշմանը սպասելու):

Պետական Խորհուրդ

Սա իրավական ատյան է, որը միայն ստուգում է գործընթացի պատշաճ վարման ընթացքը, այն գործի էության վերաբերյալ որոշում չի կայացնում: Ուստի այս փուլում է պատմել պատմությունը կամ բերել նոր փաստարկներ անհմաստ է:

Փաստաբանը այդ ատյան ներկայանում է մենակ միայն որքան հնարավոր է ամբողջական գործ կազմելուց հետո: Պետական խորհուրդը նախ արագ որոշում է կայացնում ընդունելության կիրառման մասին, այնուհետև ուսումնասիրում է գործը: Այն կարող է չեղյալ հայտարարել կամ կասեցնել ստացած վերջին որոշումը:

Պետական խորհուրդ բողոքարկումը երբեք չի կասեցնում որոշումը: Տարածքը լքելու հրամանը մնում է կիրառելի:



Բնակության իրավունքը բարդ գործընթաց է, հիմնականում իրականացվում է ըստ 1980թ դեկտեմբերի 15-ի օրենքի սահմանված կարգով՝ օտարերկրացիների տարածք մուտքի, բնակության, հաստատման և վտարման վերաբերյալ: Մենք ներկայացնում ենք այստեղ ընդգծելով, որովհետև ընթացակարգի համար անհրաժեշտ է մասնագետ փաստաբանի միջամտությունը: ²



Փաստաբանը իրավագետ է, ով ուսումնասիրել է օրենքը: Նա վստահելի անձ է, ով լսում, հորհուրդներ է տալիս և ներկայացնում է ինձ գործընթացիս ընթացքում: Այն կարող է ներկա գտնվել իմ հարցազրույցի ժամանակ և պաշտպանել իմ շահերը: Նա ենթակա է մասնագիտական գաղտնիքը պահելուն: Այնպես որ, ես կարող եմ խոսել նրա հետ, առանց վախենալու:

Եթե ես ոչ մի փաստաբանի չեմ ճանաչում, ես կարող եմ գնալ Արդարադատության պալատ կամ Իրավաբանական Օգնության Գրասենյակ: Այնտեղ կան փաստաբանների մշտական հերթապահություն, ովքեր պատասխանում են ընդհանուր հարցերին և ուղղություն տալիս համապատասխան գերատեսչություններ: Կարող ես դիմել փաստաբանի նշանակման համար:



² Ինտեգրման մարզային կենտրոնները և որոշ միություններ առաջարկում են անվճար իրավական խորհուրդներ



Ապաստան հատկացնելու և օժանդակ պաշտպանության խնդրանք

Ժնեվյան պայմանագիրը նախատեսում է պաշտպանություն յուրաքանչյուր այն անձին, ով անձամբ հետապնդվում է իր երկրում ռասայի, կրոնի, ազգային պատկանելիության, քաղաքական կարծիքի կամ առանձնահատուկ սոցիալական խմբի անդամության պատճառներով: Հայցը ներկայացվում է սահմանում կամ Օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակում՝ գալուց հետո 8 օրվա ընթացքում կամ կացության իրավունքի թույլտվության ավարտից առաջ, եթե խոսքը վերաբերում է երկարաժամկետ կացությանը. գործը կազմվում է և ուղարկվում Փախստականների և վտարանդիների գլխավոր հանձնակատարին (CGRA), որտեղ մարդկանց լսելուց և սպառնալիքի ապացույցները ուսումնասիրելուց հետո որոշում է տալ փախստականի կարգավիճակ, թե ոչ: Փախստականների և վտարանդիների գլխավոր հանձնակատարը (CGRA) ուսումնասիրում է միևնույն ժամանակ օժանդակ պաշտպանության հնարավորության վարկածը, որի համար, որոշ կոնկրետ դեպքերում անձի դեմ սպառնալիքի ապացույցը կարող է փոխարինել ժամանակավոր ընդհանուր սպառնալիքի գնահատմամբ:

- Օտարերկրացին, ով ապաստան է խնդրել 2007 թ. մայիսի 31-ից հետո ստանում է, բնակավայրի ստուգման դրական արդյունքից հետո, գրանցման տեղեկանք (քարտ Orange), 3 ամսվա վավերականությամբ: Այն երկարացվում է 3 անգամ 3 ամիսը մեկ, այնուհետև ամեն ամիս, մինչև վերջնական պատասխան ստանալը: Փախստականների և վտարանդիների գլխավոր հանձնակատարի (CGRA) կողմից բացասական պատասխան ստանալու դեպքում կարելի է բողոքարկել Օտարերկրացիների դատական խորհուրդ(CCE). այդ բողոքարկումը կասեցնում է որոշումը:



- Փախստականի կամ օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստանալու դեպքում, անձին տրվում է օտարերկրացիների գրանցամատյանում գրանցման տեղեկանք (CIRE)³, որը սահմանափակվում է մեկ տարի ժամկետով՝ պայմաններով (քարտ A) կամ մշտական բնակություն (քարտ B): 5 տարի անց բնակության իրավունքը դառնում է անսահմանափակ:

Մարդասիրական հիմունքներով կանոնակարգման հայց (9bis)

Երեք ամսից ավելի յուրաքանչյուր կացության իրավունքի հայց պետք է արվի սեփական երկրում, դիվանագիտական բաժանմունքում կամ բելգիական հյուպատոսարանում: 9bis-ը բացառություն է օրենքում. տարածքում գտնվող օտարերկրացին, անձնագրի առկայության դեպքում, կարող է, բացառիկ հանգամանքներում, դիմել կանոնակարգման՝ տարածքային վարչությունում, որը այն կփոխանցի Օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակին: Մինչդեռ, մինչ դրական պատասխանի ստանալը՝ նա կլինի անկանոն կարգավիճակում, այսինքն՝ ապօրինի

- Եթե պատասխանը դրական է, անձը ստանում է ժամանակավոր՝ մեկ տարվա օտարերկրացիների գրանցամատյանում գրանցման տեղեկանք (CIRE), երկարաձգման իրավունքով՝ որոշակի պայմանների համաձայն (քարտ U), կամ անժամկետ կացության իրավունք (քարտ F):

³ Օտարերկրացիների գրանցամատյանում գրանցման տեղեկանք



Բժշկական հիմունքներով կանոնակարգման հայց (9ter)

Այս գործընթացը կարող է սկսել Բելգիայում բնակվող օտարերկրացին՝ Օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակում, ով ունի անձը հաստատող փաստաթուղթ և տառապում է հիվանդությամբ, որը պատճառում է կյանքին կամ ֆիզիկական ամբողջականությանը վտանգ, անմարդկային վերաբերմունքի ռիսկ, երբ չկա ադեկվատ բուժում սեփական երկրում:

Հայցի քննումը կատարվում է երկու փուլով: Երբ դիմումը ընդունվում է, և բնակավայրի ստուգման դրական արդյունքից հետո, անձը ստանում է հաշվառման վկայական (քարտ Orange), որը ուժի մեջ է 3 ամիս, վերականգնվող երեք անգամ երեք ամսով, ապա ամեն ամիս: Հետո, եթե բնակության իրավունքը հաստատվում է, անձը ստանում է սահմանափակ օտարերկրացիների գրանցամատյանում գրանցման տեղեկանք (CIRE) (քարտ A) առնվազն մեկ տարի, վերականգնվող: 5 տարի հետո, անձը կարող է ստանալ անսահմանափակ օտարերկրացիների գրանցամատյանում գրանցման տեղեկանք (CIRE) (քարտ B):

Մարդկանց թրաֆիքինգ

Եթե անձը գտնում է, որ զոհ է մարդկանց թրաֆիքինգի (թրաֆիքինգով զբաղվող ընդհատակյա կազմակերպության կողմից շահագործում), գոյություն ունի հատուկ ընդունելություն՝ իր կողմից համագործակցության, ցանցերի փլուզման օգնության, դիմաց: Գործընթացը բարդ է և հարկավոր է բողոք ներկայացնել դատական իշխանություններին: Կացության իրավունքի թույլտվության հայցը արվում է Օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակի MINTEH(մարդկանց թրաֆիքինգ և օտարերկրյա անչափահասների համար) բաժանմունքում:



Ընտանիքի վերամիավորում

Գործընթացը ներառվում է հայրենի երկրում գործող դիվանագիտական կառույցում կամ հյուպատոսարանում, կամ, որոշ դեպքերում, քաղաքային վարչությունում:

Օտարերկրացին՝ ազգությամբ երրորդ երկրից, որն ունի անսահմանափակ բնակության իրավունք (հոդ. 10) հնարավորություն է ընձեռում իր ընտանիքի որոշակի անդամներին իրեն միանալու՝ կայուն, կանոնավոր և պատշաճ եկամուտ, բավարար բնակարանային տարածք, առողջության ապահովագրություն, բժշկական տեղեկանք և ոստիկանության գրառումից փաստաթուղթ ներկայացնելու պայմանով: Վերամիավորվող անձը գալիս է վիզա D-ով (երկարատև բնակություն), և բնակավայրի ստուգման դրական արդյունքից հետո ստանում է կացության սահմանափակ իրավունք (քարտ A) 3 տարի հետո, անձը կարող է դիմել կացության անսահմանափակ իրավունք ստանալու համար (քարտ B) քաղաքային վարչություն, որը այն փոխանցում է օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակ: Եթե, երեք տարվա ընթացքում, լինի բաժանում կամ եկամտի կորուստ, ապա բնակության իրավունք թույլտվությունը ետ է վերցվում, բացառությամբ հատուկ պատճառի (օրինակ՝ ընտանեկան բռնություն): Որոշումը կասեցնող բողոքարկում կարելի է ներկայացնել Օտարերկրացիների դատական խորհուրդ(CCE):

Ազգությամբ երրորդ երկրից օտարերկրացու հետ վերամիավորման համար, ով ունի կացության իրավունքի սահմանափակ թույլտվություն (հոդ. 10 BIS), գործում են նույն պայմանները, բացառությամբ, սահմանափակ կացության



իրավունքի թույլտվությունը չի կարող գերազանցել վերամիավորումը պահանջողի կացության իրավունքի ժամկետը (քարտ A):

Օտարերկրացին, ով Բելգիայում արդեն ունի օրինական բնակության իրավունք կարող է դիմել քաղաքային վարչություն՝ կարգավիճակի փոփոխության համար. օրինակ՝ ուսանողը, որը ամուսնանում է: Նա ստանում է հաշվառման վկայական (Orange քարտ) 6 ամսվա վավերությամբ, որի ժամկետը կարելի է երկարացնել երկու անգամ 3 ամսով: Եթե բնակության իրավունքը հատկացվում է, ապա այն ստանում է օտարերկրացիների գրանցամատյանում սահմանափակ գրանցման տեղեկանք (CIRE) (քարտ A) մեկ տարի ժամկետով, որի վավերությունը կարելի է երկարացնել: 3 տարի հետո կացության իրավունքը դառնում անսահմանափակ տևողությամբ (քարտ B):

Ազգությամբ երրորդ երկրի օտարերկրացին, որը հանդիսանում է Եվրամիության կամ Եվրոպական միջազգային տարածքի քաղաքացու ընտանիքի անդամ (art. 40bis), կարող է գալ Բելգիայում կարճ կացության իրավունքով՝ առավելագույնը 3 ամիս ժամկետով՝ պայմանով, որ նա կտեղեկացնի քաղաքական վարչական մարմիններին իր ժամանումից հետո 10 օրվա ընթացքում: Եթե նա ցանկանում է ավելի երկար մնալ, նա պետք է դիմի իր բնակվելու տարածքի քաղաքապետարան՝ կացության իրավունք ստանալու համար, իր վիզայի ժամկետը լրանալուց առաջ: Այդ համատեքստում մենք ենթարկվում ենք ընտանիքի վերամիավորման պայմաններին՝ եկամուտ, բնակարանային տարածք և բժշկական ապահովագրություն: Եթե ընտանեկան կապը հաստատված է բնակավայրի ստուգման դրական արդյունքից հետո անձը ստանում է 6 ամսվա հաշվառման վկայական: Այնուհետև, 3 ամսվա ընթացքում հարկավոր է



ներկայացնել պահանջվող փաստաթղթերը: Եթե բնակության իրավունքը հասկացվում է, քաղաքային վարչությունը տալիս է քարտ F: Երեք տարի հետո, բնակության իրավունքը դառնում է վերջնական (քարտ F +): Մերժման դեպքում, բողոքարկման հնարավորություն է տրվում Օտարերկրացիների դատական խորհուրդ(CCE):

Կարճաժամկետ կացություն

Ազգությամբ երրորդ երկրի օտարերկրացին, ով ժամանել է Բելգիա, կարճատև վիզայով կամ ազատված վիզայի պարտավորվածությունից, պետք է ներկայանա քաղաքային վարչություն և տեղեկացնի իր ժամանման մասին: Նա կստանա 3 ձևի փաստաթուղթ, որի վրա նշված կլինի մնալու տևողությունը:



Ողջ գործընթացի ժամանակ շատ կարևոր է Օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակին և/կամ Փախստականների և վտարանդիների գլխավոր հանձնակատարին (CGRA) տեղեկացնել յուրաքանչյուր փոփոխության և տեղեկատվության մասին, որը վերաբերում է Բելգիայում իմ կարգավիճակին. հասցեի, ընտանիքի կազմի փոփոխությունն օրինակ՝ երեխայի ծնվելը, իմ կացության իրավունքի քարտի երկարաձգումը...



Հասցեի փոփոխություն

Օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակը և/կամ Փախստականների և վտարանդիների գլխավոր հանձնակատարը ցանկացած պահի պետք է իմանա Բելգիայի տարածքում իմ գտնվելու վայրի մասին: Եթե ես այլևս չեմ ապրում Բելգիայում, իմ գործընթացը կարող են փակել: Ուրեմն, շատ կարևոր է նամակի միջոցով տեղեկացնել իմ բնակավայրի ցանկացած փոփոխության մասին:





Ի՞նչպես

Նամակը գրելուց հետո ես այն պատվիրված փոստային առաքման ճանապարհով ուղարկում եմ Օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակ և, անհրաժեշտության դեպքում նաև, Փախստականների և վտարանդիների գլխավոր հանձնակատարին: Այդ գործողությունը կատարվում է փոստում. այնտեղ ես ստանում եմ փաստաթուղթ, որը նամակի ուղարման ապացույցն է: Ուշադրություն, այդ նամակում նաև տեղ պետք է գտնի քաղաքային վարչության տեղեկանքը, որը հաստատում է հասցեի փոփոխությունը:

Ընտրված հասցեի փոփոխություն

Ընտրված հասցեն այն հասցեն է, որտեղ ես ցանկանում եմ ստանալ Օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակի և Փախստականների և վտարանդիների գլխավոր հանձնակատարի ուղարկված նամակները: Դա կարող է լինել իմ սեփական հասցեն, իմ փաստաբանինը կամ իմ կողմից վստահված անձինը: Ես այդ հասցեով ստանում եմ բոլոր ծանուցագրերը և պաշտոնական ծանուցումները: Ամեն անգամ, այդ հասցեի փոփոխման ցանկության դեպքում պատվիրված փոստային առաքման ճանապարհով պետք է տեղյակ պահեմ Օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակին և Փախստականների և վտարանդիների գլխավոր հանձնակատարին:

Ընտրված հասցեի փոփոխություն

Ընտրված հասցեն այն հասցեն է, որտեղ ես ցանկանում եմ ստանալ Օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակի և Փախստականների և վտարանդիների գլխավոր հանձնակատարի ուղարկված նամակները: Դա



կարող է լինել իմ սեփական հասցեն, իմ փաստաբանինը կամ իմ կողմից
վստահված անձինը: Ես այդ հասցեով ստանում եմ բոլոր ծանուցագրերը և
պաշտոնական ծանուցումները: Ամեն անգամ, այդ հասցեի փոփոխման
ցանկության դեպքում պատվիրված փոստային առաքման ճանապարհով
պետք է տեղյակ պահեմ Օտարերկրացիների հարցերով զբաղվող
գրասենյակին և Փախստականների և վտարանդիների գլխավոր
հանձնակատարին:

Փոփոխություն ընտանիքի կազմում

Ընտանիքի կազմը քաղաքային վարչության կողմից տրվող փաստաթուղթ է,
որում նշվում են այն անձանց անունները, ովքեր ապրում են ինձ հետ մեկ
տանիքի տակ:

Ցանկացած փոփոխության մասին հարկավոր է տեղյակ պահել
Օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակին և Փախստականների
և վտարանդիների գլխավոր հանձնակատարին, որովհետև այն կարող է
հետևանքների հանգել իմ գործընթացում. ունենալ կամ որդեգրել երեխա,
ամուսնություն, համակեցություն, ամուսնալուծություն, կորցնել
զուգընկերոջը կամ երեխային...

Կացության իրավունքի քարտի երկարաձգում

Երբ իմ կացության իրավունքի փաստաթղթի վավերության ժամկետը
մոտենում է ավարտին, ես պետք է գնամ քաղաքային վարչությունում
օտարերկրացիների համար նախատեսված բաժին, որպեսզի այն
երկարաձգեն՝ վավերության ժամկետի ավարտից նվազագույնը մեկ ամիս
շուտ:



Եթե դա օտարերկրացիների գրանցամատյանում գրանցման տեղեկանք է (CIRE), ես , քաղաքային վարչություն պետք է տանեմ ապացույցներ, որ Օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակի կողմից պահանջվող պայմանները երկարաձգման համար բավարար են: Այդ պահանջները նշված են օտարերկրացիների գրանցամատյանում գրանցման տեղեկանքին (CIRE) կցված փաստաթղթում և ես պետք է շատ ուշադիր լինեմ ժամկետի ավարտի մոտենալու ժամանակ: Իմ փաստաբանի հետ ես ուղարկում եմ իմ տրամադրության տակ գտնվող բոլոր փաստերը, որպեսզի Օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակը կարողանա ուսումնասիրել այդ պայմանները: Ես կարող եմ նաև ինքս փոխանցել իմ գործը իմ բնակության վայրի քաղաքային վարչություն, սակայն դա Օտարերկրացիների հարցերով զբաղվող գրասենյակն է, որ կայացնում է որոշումը և ուղարկում հրահանգը քաղաքային վարչություն:

Եթե դա վերաբերում է գրանցման տեղեկանքին (քարտ Orange), ապա սկզբնական շրջանում յուրաքանչյուր երեք ամիս այն պետք է կնքվի, այնուհետև ամեն ամիս: Այդ դեպքում ես ներկայանում եմ քաղաքային վարչություն վավերության ժամկետի ավարտման օրը՝ այն կնքելու նպատակով: Օրինակ՝ իմ գրանցման տեղեկանքը (քարտ Orange) վավեր է մինչև երեքշաբթի՝ մարտի 20-ը: Ես այն պարտադիր կերպով պետք է երկարաձգեմ չորեքշաբթի՝ մարտի 21-ին: Եթե քաղաքային վարչությունը փակ է հանգստյան օրերին, ես պետք է ներկայանամ նախորդող ուրբաթ:



Ուշադրություն, երբ քարտը լցված լինի կնիքներով, հարկ կլինի նորը
խնդրելու, ուրեմն պետք է տանել նոր լուսանկար:

Ինձ հարկավոր է լինել աչալուրջ. ես պետք է նշեմ իմ կացության իրավունքի
քարտի երկարաձգելու ժամկետը, պետք է ներկայացնեմ բավականաչափ
ապացույցներ պահանջվող պայմանների վերաբերյալ և անմիջապես պետք է
տեղեկացնեմ ինձ հետ կատարվող յուրաքանչյուր փոփոխության մասին:

Հարկ լինելու դեպքում դիմում եմ գրողների հանրային ծառայություններին՝
մարզային ինտեգրման կենտրոնները և որոշ կազմակերպություններ
առաջարկում են գրելու անվճար օգնություն:



Changement de résidence

Office des Étrangers
Boulevard Pacheco, 44
1000 Bruxelles

Le xx/xx/20..

Madame, Monsieur,

Concerne : Changement de ma résidence habituelle.

Mes références : Madame Gertrude Dumont, N°SP : ou N°CGRA :

En date du , j'ai effectué mon changement de résidence habituelle auprès de ma Commune. Je vous transmets dès lors ma nouvelle adresse ainsi qu'une attestation de la Commune certifiant ce changement.

.....
.....
.....
.....

Mme Gertrude DUMONT



Changement de domicile élu

CGRA
Rue Ernest Blerot, 39
1070 Bruxelles

Demande de changement d'élection de domicile élu

Je soussigné(e)N°SP :

Déclare vouloir modifier mon domicile élu.

Nouveau Domicile élu :

.....
.....
.....

Fait à le
.....

Signature :

Les adresses importantes



Office des Étrangers

Boulevard Pacheco, 44

1000 Bruxelles

Tél : 02/793.80.00

Email : infodesk@biz.fgov.be

CGRA

Rue Ernest Blerot, 39

1070 Bruxelles

Tél : 02.205.51.11

Email : cgra.info@ibz.fgov.be

CCE

Rue Gaucheret, 92-94

1030 Bruxelles

Tél : 02/791.60.00

Email : info.rvv-cce@ibz.fgov.be

Conseil d'État

Rue de la Science, 33

1040 Bruxelles

Haut Commissariat des Nations Unies pour les Réfugiés

Comité Belge d'Aide aux Réfugiés

Avenue Louise, 283

1050 Bruxelles

Tél : 02/627.59.99

Email : belbr@unhcr.org



կացության իրավունք ստանալուց կարևոր է առաջին իսկ հնարավորության դեպքում բանկում հաշիվ բացել: Շատ քայլեր կախված են դրանից:

Յուրաքանչյուր բանկում բանկային հաշիվ բացելու պայմանները և կառավարման ծախսերը կարող են լինել տարբեր: Ընտրությունն անելուց առաջ ես պետք է հետաքրքրվեմ և տեղեկանամ առաջարկվող ծառայություններին, մասնավորապես առկա մասնաճյուղերի քանակին և բանկոմատներին, որենք ինձ թույլ կտան մուտք գործել առցանց ծառայությունների համակարգ:



Հաշվային քաղվածքներ

Ամեն անգամ, որնիցե գործողություն կատարելուց (օրինակ հաշիվ-ապրանքագիր վճարել) կարող եմ այն տպել, որպեսզի հետքը պահպանվի: Կարող եմ պարբերաբար տպել իմ հաշվի քաղվածքները նաև բանկոմատում. դա իմ հաշվի համարից կատարված բոլոր գործողությունների ցուցակն է: Կան բանկեր, որոնք կարող են այդ քաղվածքները ուղարկել տուն: Ուշադրություն՝ այս ծառայությունը գանձվում է: Ես կարող եմ նաև պահել իմ հաշվի քաղվածքները էլեկտրոնային տարբերակով, իմ առցանց հաշվի վրա, որն անվճար է:

Այդ քաղվածքները շատ կարևոր է պահպանել թղթապանակում: Որոշ վարչական գործողությունների համար դրանք կարող են անհրաժեշտ լինել:



Բանկային քարտ

անվտանգության համար այս քարտը ունի ծածկագիր, որը հարկավոր է մտապահել և հավաքել յուրաքանչյուր գործողությունից առաջ: Քարտը նաև հարկավոր է ստորագրել: Այն ինձ թույլ է տալիս բանկից փող հանել, կատարել բոլոր գործողությունները առաջարկվող բանկոմատի կողմից և վճարել ապրանքի կամ ծառայությունների համար այն առևտրի կետերում, որտեղ կան բանկոնտակտ (bancontact) ապարատներ (այդ առևտրի կետերում փակցված է Bancontact/ Mister Cash):

Քարտը գողանալու և կորցնելու դեպքում անմիջապես տեղեկացնում եմ 070/344.344 "CARD STOP": Այս ծառայությունը գործում է 24/24 ժամ և հանձն է առնում անհրաժեշտության դեպքում սառեցնել քարտը: Այնուհետև հայտ եմ ներկայացնում ոստիկանություն գողության կամ կորստի մասին և դիմում բանկին նոր քարտ ստանալու համար:





Գնումներն քարտով վճարելու համար.

- Տեղադրում եմ քարտը վճարման սարքի մեջ, պաշտպանիչ շերտը ուղղված ներքև:
- հավաքում եմ գաղտնի ծածկագիրը . և սեղմում OK:
- Ետ եմ վերցնում քարտն և վաճառողը ինձ է տալիս ապարատից տպված կտրոնը:

Կարող եմ նաև վճարել «առանց կոնտակտ». Հարող եմ պահել քարտն սարքի վերին կամ կողքի հատվածում:

Գաղտնի ծածկագիր

Գաղտնի ծածկագիրը հարկավոր է մտապահել և հատկապես խուսափել այն թղթի վրա գրած պահել դրամապանակում:

Բազմաթիվ անձիք օգտագործում են իրենց ծննդյան տարեթիվը որպես գաղտնագիր:

Զգույշ, եթե կորցնեմ դրամապանակս, անբարյացակամ մեկը կարող է հեշտությամբ իմանալ ծննդյանս տարեթիվը անձս հաստատող փաստաթղթով: Ավելի լավ է ընտրել օրինակ բջջայինի փին ծածկագիրը:

Ուշադրություն, եթե երեք անգամ սխալվեմ գաղտնի ծածկագիրը հավաքելիս, քարտն կսառեցվի: Դրանից հետո պետք է դիմել բանկին այն կրկին շրջանառության մեջ դնելու համար:



Ապրանքագրեր (ֆակտուրա)



Ապրանքագիրը դա հանգամանակից գրառում է, որտեղ նշվում է իմ ազգանունը, վճարման ենթակա գումարը, հաշվեհամարը, որին փոխանցվելու է գումարը և վճարման վերջնաժամկետը: Դա կարող է լինել գնված ապրանքների կամ մատուցված ծառայությունների համար. տան վարձ, էլեկտրականություն, ջուր, ապահովագրություն, ավանդ, հիվանդանոցային ծախսեր, դպրոցի վճարներ...



Հաշիվ-ապրանքագիր վճարելու համար հարկ կարող է համարվել լրացնելու փոխանցման կամ ներդրման կտրոնը: Դա կարող է լինել թղթի ձևով (լրացնում եմ և ներկայացնում բանկ) կամ համակարգչային ձևով (ինքս կատարում եմ բանկումատում, սմարթֆոնի հավելվածի կամ իմ բանկի կայքի միջոցով): Ուշադրություն՝ թղթային տարբերակով փոխանցումը վճարովի է:

Թղթի ձևով փոխանցումը պետք է լինի ստորագրված և գրված լինի ամսաթիվը: Լրացնում եմ հետևյալ վանդակները. վճարման գումարը, ստորագրությունը, ամսաթիվը, հաշվեհամարը, որին փոխանցում եմ գումարը, ստացողի ազգանունը և հասցեն, փոխանցողի հաշվեհամարը (իմը), փոխանցողի ազգանունը և հասցեն (ես), հաղորդագրությունը (նշում եմ ինչ եմ վճարում):

Ապրանքագրեր (ֆակտուրա)



Փոխանցման թերթիկը բաղկացած է երկու մասից: Առանձնացնում են երկու մասերը իրարից զգուշորեն. ներկայացնում են առաջինը բանկ, որը հանձն է առնում վճարումը իրականացնել, իսկ երկրորդը պահում են որպես ապացույց:

ՁԵՌԱԳԻՐԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԸՆԹԵՌՆԵԼԻ և ԱՌԱՆՑ ԶՆՋՈՒՄՆԵՐԻ

Միջազգային փոխանցման համար պետք է օգտագործեն ԻԲԱՆ (IBAN) ծածկագիրը: Դա միջազգային հաշվեհամարների նիշն է: Այն սկսվում է IBAN-ով, այնուհետև երկրի տառերը, օրինակ՝ Բելգիայի համար, Ֆրանսիայի համար, հետո յուրաքանչյուր բանկի տարբերակիչ համարը, հետո իմ հաշվեհամարի թվերը: Ես IBAN-ի համարը կարող եմ գտնել քարտի կամ հաշվեհամարի քաղվածքների վրա:





Զգուշացեք վարկերից



Շուկայում առկա են ապառիկ ապրանք ձեռք բերելու կամ կանխիկ վարկ վերցնելու բազմաթիվ առաջարկություններ: Նրանք կարող են ծառայել երբեմն վճարումը տարածելու համար: Սակայն, աղետալի պարտքի ռիսկը պետք է լուրջ ընդունել: Սա իսկական սոցիալական չարիք է:

Փոխառված գումարը անվճար չէ. վարկերի մեծ մասը ներգրավում են բարձր տոկոսադրույքներ, որոնք պետք է ստանձնել:

Ինչպես ընդգծում է հաստատված բանաձևը "փող վերցնելը՝ փող արժի"